



OECD Eurasia

Competitiveness Programme

ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ

ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2016

Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի գնահատում

Տեղեկատվական միջոցառում Հայաստանում

23-ը փետրվարի 2016թ.

ՀՀ, ք. Երևան,
Վազգեն Սարգսյան 26/1
Էրեբունի պլազա

Կազմակերպվում է ԳՄՀԸ համագործակցությամբ:



**ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ.
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2016
ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԿՏԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**

■ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՏՀԶԿ-ը, Եվրոպական հանձնաժողովը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) և Վերապատրաստման եվրոպական հիմնադրամը (ՎԱՀ) Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համատեղ կազմակերպում են «ՓՄՁ քաղաքականության համաթիվ. Արևելյան գործընկեր երկրներ 2016. Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում» տեղեկատվական միջոցառումը Հայաստանում: Միջոցառման նպատակն է ներկայացնել Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի գնահատման արդյունքները և քննարկել գործարար միջավայրի առանցքային զարգացումները և մնացյալ մարտահրավերները, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար՝ Հայաստանում: Միջոցառումը նախատեսում է հրապարակային մեկնարկ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ, որին կհաջորդեն առաջարկվող քաղաքականության ճանապարհային քարտեզների հանգամանալից քննարկումներ:

■ ԻՆՉ Է ՓԲԱ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատման շրջանակներում մշտադիտարկվում է Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի տաս սկզբունքների իրականացման առաջընթացը և չափվում է մոտարկվածությունը ԵՄ աշխատակարգերին ու ստանդարտներին: ՓԲԱ սկզբունքները նախատեսված են ՓՄՁ սուբյեկտների համար խաղի հավասար պայմաններ ստեղծելու և ձեռնարկատիրությունն ու մրցունակությունը խթանելու համար:

ՓԲԱ գնահատականը մանրամասն տեղեկատվություն է տալիս քաղաքականության պատասխանատուներին ՓՄՁ քաղաքականության արդյունքների մասին և բարելավումներ է առաջարկում քաղաքականության բոլոր ուղղություններում: Ավելին, այն նախանշում է քաղաքականությունների և աջակցության ծրագրերի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման ուժեղ և թույլ կողմերը՝ միաժամանակ համեմատելով տվյալ երկրի առաջընթացը նախորդ գնահատման արդյունքների համեմատ:

2014-2015 թվականներին Արևելյան գործընկերության տարածաշրջանում իրականացվել է երկրորդ գնահատումը, հաջորդելով 2012 թվականի առաջին գնահատմանը, որի

արդյունքում հրապարակվել էր «ՓՄՁ քաղաքականության համաթիվը. Արևելյան գործընկեր երկրներ 2012թ.»-ը:

■ԻՆՉ Է ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ

ՓՄՁ քաղաքականության համաթիվը զարգացող տնտեսությունները համեմատող գործիք է՝ փոքր և միջին ձեռնարկություններին աջակցող քաղաքականությունների առաջընթացը մշտադիտարկելու և գնահատելու համար: Համաթիվը մշակվել է 2006 թվականին՝ ՏՀԶԿ-ի Եվրոպական հանձնաժողովի, ՎԶԵԲ-ի և ՎԵՀ-ի համատեղ ջանքերով և ներդրվել է չորս տարածաշրջանների 32 տնտեսություններում (Արևմտյան Բալկաններ և Թուրքիա, Արևելյան Եվրոպա և Հարավային Կովկաս, Հյուսիսային Աֆրիկա և Միջին Արևելք, Հարավարևելյան Ասիա):

ՓՄՁ քաղաքականության համաթվի մեթոդաբանությունը վերանայվել է 2014 թվականին՝ քաղաքականության ինտենսիվությունը, որակն ու ներգործությունն ամբողջությամբ հասկանալու համար:

■Ո՞Վ Է ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Հայաստանում ՓՄՁ քաղաքականության համաթիվը. Արևելյան գործընկեր երկրներ 2016 մեկնարկային միջոցառումը կհամախմբի ՀՀ կառավարության, ՏՀԶԿ-ի, Եվրոպական հանձնաժողովի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Վերապատրաստման եվրոպական հիմնադրամի, ինչպես նաև գործարար և գիտական համայնքի, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

**ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2016
ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԿՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

23-ը փետրվարի 2016, Երևան

14.00 – 14.30 Գրանցում

14.30 – 15.30 *Պաշտոնական մեկնարկ. ՓՄՁ քաղաքականության համաթիվ.
Արևելյան գործընկեր երկրներ 2016*

14.30 – 15.00 Ողջույնի խոսք

- պրն. Կարեն Ճշմարիտյան, ՀՀ էկոնոմիկայի նախարար (ենթակա է հաստատման)
- Ն.Գ. պրն. Պյոտր Անտոնի Սվիտալսկի, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան

15.00 – 15.15 Հիմնական արդյունքների և առաջարկությունների ներկայացում

- պրն. Դանիել Քուադրեկ, ՏՀԶԿ, Ծրագրի ղեկավար

15.15 – 15.30 Հարց ու պատասխան

15.30 – 16.00 Սուրճի ընդմիջում

16.00 – 17.30 ՓՄՁ քաղաքականության բարեփոխումների կարևորում. իրականացման ճանապարհային քարտեզ

Նախագահող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գարեգին Մելքոնյան

16.00 – 16.10 Բացման խոսք նախագահողի կողմից

- պրն. Գարեգին Մելքոնյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (ենթակա է հաստատման)

16.10 – 16.40 ՓՄՁ քաղաքականության ճանապարհային քարտեզ Հայաստանի համար

- Ենթակա է հաստատման, Եվրոպական հանձնաժողով
- պրն. Անտոն Լե Գարսիա, ՏՀԶԿ, Ծրագրի համակարգող
- տկն. Մերյեմ Տորուն, ՏՀԶԿ, Ծրագրի վերլուծաբան
- պրն. Վինսենտ Մըքքրայդ, ՎԵՀ, Հայաստանի հարցերով քարտուղար

Կառավարություն տեսակետներ

16.40 – 16.50 • Կառավարությունը ներկայացնում է իր կարծիքը ճանապարհային քարտեզի իրականացման և հնարավոր հաջորդ քայլերի վերաբերյալ

Մասնավոր հատվածի տեսակետներ


16.50 – 17.10 • Մասնավոր հատվածը ներկայացնում է իր տեսակետները առաջարկվող բարեփոխումների վերաբերյալ

17.10 – 17.30 Ընդհանուր քննարկում

**ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ 2016**

ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԿՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1 ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



2 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

- **Գործարար միջավայրի հորիզոնական բարեփոխումները շարունակում են հանդիսանալ ամենանշանակալի արդյունքներ ապահովող ուղղությունը:** ԵԳ գրեթե բոլոր երկրները լուրջ արդյունքներ են գրանցել գործարարության և ներդրումային միջավայրի բարեփոխումների մշակման և իրականացման գործում՝ այս կերպ օգտակար լինելով բոլոր ձեռնարկություններին՝ անկախ մեծությունից, այդ բարեփոխումների թվում են գործարարությանն առնչվող օրենսդրության պարզեցումը, առևտրի տեխնիկական խոչընդոտների դյուրացումը և որակի ենթակառուցվածքների բարելավումը, ինչպես նաև ֆինանսական հատվածի իրավական և կարգավորիչ միջավայրի դաշտի բարելավումը:
- **Կառավարություններն ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում ՓՄՁ զարգացման ինստիտուցիոնալ շրջանակների զարգացմանը:** Ընդհանուր միտում է նկատվում ՓՄՁ աջակցության ռազմավարական շրջանակների հիմնարար ուղղությունների ներդրման ուղղությամբ, այդ թվում՝ ՓՄՁ ռազմավարության մշակում (օրինակ՝ Վրաստան և Մոլդովա), ՓՄՁ սահմանման բարելավում (օրինակ՝ Ուկրաինա, Ադրբեջան) և ՓՄՁ աջակցության գործակալության ստեղծում (օրինակ՝ Վրաստան):

- **Տարածաշրջանում ՓՄՁ հետագա աջակցությունն ապահովելու համար անհրաժեշտ են ՓՄՁ հասցեական քաղաքականության գործիքներ:** ԵԳ երկրների մեծ մասը ներդրել է ՓՄՁ մրցունակության բարձրացման նոր ծրագրեր, այդ թվում՝ ՓՄՁ սուբյեկտների և սկսնակ ընկերությունների համար աջակցության ծառայություններ (*օրինակ՝ վերապատրաստման ծրագրեր*), ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության խրախուսման կոնկրետ գործիքներ (*օրինակ՝ վարկային երաշխավորությունների մեխանիզմ, մեկնարկի ֆինանսավորում*), ձեռնարկատիրական ուսուցման և կանանց ձեռներեցության նախաձեռնություններ (*օրինակ՝ միջոցառումներ կին ձեռներեցների համար*) և արտահանման խթանում (*օրինակ՝ արտահանման գործակալություն*):

3

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐ

ա. ՓՄՁ ինստիտուցիոնալ, իրավակարգավորման և գործառնական միջավայրի հզորացում

- Շարունակել ՓՄՁ համակողմանի միջնաժամկետ ռազմավարությունների մշակման հարցում արձանագրված առաջընթացը և, որպես ֆիսկալ ռեսուրսների թուլլատրում, ստեղծել իրականացման անկախ գործակալություններ:
- Հավաքագրել և տարածել ավելի հաջող վիճակագրական տվյալներ՝ քաղաքականության մշակմանն աջակցելու նպատակով:
- Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդաբանությունները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին:
- Տարածաշրջանում պետական-մասնավոր երկխոսության մեխանիզմին տալ ինստիտուցիոնալ կառուցվածք:

բ. ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացում

- Շտկել ներկայումս արձանագրված՝ ՓՄՁ սուբյեկտների վարկավորման նվազման միտումը:
- Աշխատել կարգավորման դաշտի ուղղությամբ, որը կդյուրացնի բանկերի՝ առավել երկարաժամկետ և տեղական արժույթով ֆինանսավորման հասանելիությունը, և խթանել մրցակցությունը բանկային ոլորտում, որպեսզի բանկերն առաջարկեն առավել մրցակցային դրույքաչափեր և հասնեն նոր սեգմենտներին:
- Աջակցել բանկային ֆինանսավորման կենսունակ այլընտրանքներին՝ գործի դնելով ոչ բանկային ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների տրամադրման համարժեք իրավական շրջանակ:
- Հանրության շրջանում խթանել ֆինանսական գրագիտությունը և բիզնեսի սեփականատերերի շրջանում զարգացնել ֆինանսական կառավարման ու բիզնեսի պլանավորման հմտություններ:

գ. Հմտությունների և ձեռնարկատիրության զարգացում

- Ձեռնարկատիրության ուսուցումը ներառել պետական կրթակարգում:
- Կանանց ձեռներեցության ուղղությունն ավելի սերտ կապակցել երկրների՝ տնտեսական աճով զբաղվող գործակալություններին:
- Բարելավել ՓՄՁ հմտությունները՝ ծրագրերի կատարելագործման, վերապատրաստման կարիքների վերլուծության և որակի ապահովման միջոցառումների միջոցով:

դ. ՓՄՁ մրցունակության բարձրացում

- ՓՄՁ աջակցության մեխանիզմները դարձնել ավելի արդյունավետ և ավելի համապատասխան տարբեր ՓՄՁ սեգմենտների կարիքներին և ավելին անել բիզնեսի աջակցման ծառայությունների մասնավոր շուկայի ձևավորումը խթանելու համար:
- Պետական գնումների շրջանակն ադապտացնել այնպես, որ ՓՄՁ սուբյեկտները խրախուսվեն մուտք գործել այս կարևոր շուկա:
- Ընդլայնել նորարարության քաղաքականությունը՝ տարածելով ոչ միայն SS ոլորտի, այլ մյուս ոլորտների ուղղությամբ, շեշտադրել ոչ տեխնոլոգիական նորարարությունը և առևտրայնացումը:

ե. Աջակցություն ՓՄՁ միջազգայնացմանը

- Ստեղծել առևտրի խթանման ու աջակցության մեխանիզմ՝ ավելացնելով առավել լուրջ պրոդուկտներ (օրինակ՝ շուկայի մասին հետախուզական տվյալներ և ուսուցում), զարգացնել արտահանման խթանման գործակալությունների կարողությունները և մեծացնել շրջանառու միջոցների հասանելիությունը:
- Շարունակել տեխնիկական և որակի ստանդարտների համապատասխանեցումը միջազգային և ԵՄ նորմերին, զուգահեռ իրականացնելով կարողությունների զարգացում և իրազեկում:
- Առավել ակտիվ լինել գլոբալ արժեքի շղթաներին ՓՄՁ սուբյեկտների ինտեգրումը խրախուսելու գործում, օրինակ՝ ՕՈՆԸ և ՓՄՁ-ներ կապերի դյուրացման միջոցով: